ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկ ամսով հանգըստանալու համար մեկնում է Կիլովոդակի «Կրասնի կամեն» առողջարան:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Ծիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհում է Մայր Աթոռի միաբանությունը և պաշտոնեությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

* * *

Օգոստոսի 6-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

* * *

Օգոստոսի 13-ին, կիրակի.—Վերափոխումը ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի հանդիսադրությամբ, կատարվում է խաղողի օրհնության կարգ՝ խուռներամ ուխտավոր բազմության ներկայությամբ:

Ս. պատարագին ներկա են լինում ուխտավորաբար ս. Էջմիածին այցելած Ֆրանսիայի կաթոլիկ և բողոքական համայնքների էկումենիկ շարժման մի խումբ մասնակիցներ, որոնք երկյուղած բարեպաշտությամբ ընդունում են էկումենիկ սուրբ հաղորդություն:

Հավարտ ս. պատարագի ֆրանսիացի ուխտավորներն այցելում են Վեհարան:

Լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը, հանուն Հայոց Հայրապետի, բարի գալուստ է մաղթում և ողջունում ներկայությունը ֆրանսիացի ուխտավորների:

Իր խոսքի մեջ տ. Հուսիկ եպիսկոպոսը համառոտակի հյուրերին է ներկայացնում Մայր Աթոռ ս. Էջմիածնի հիմնադրության պատմությունն ու կանգ առնում Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի գահակալության տարիներին կատարված հոգևոր, մշակութային, շինարարական աշխատանքների, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունների և փոխայցելությունների վրա, որոնցով ամրապնդվում են բոլոր եկեղեցիների հետ էկումենիկ համագործակցությունն ու ջանքերը Քրիստոսի եկեղեցու փառքի և աշխարհի խաղաղության համար:

Հանուն ուխտավորների շնորհակալության

և երախտագիտության ջերմ խոսք է ասում վերապատվելի Ա. Սահակյանը:

Ֆրանսիացի ուխտավորները Վեհարանի այգու մրգերով հյուրասիրվելուց հետո հրաժեշտ են առնում Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

* * *

Օգոստոսի 14-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն հանգչեցելոց»:

* * *

Օգոստոսի 19-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

* * *

Օգոստոսի 20-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: Քարոզում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ ս. Աստվածածնի տոնի առիթով մայրության գաղափարի և առաքելության մասին եկեղեցու կյանքում և մարդկության պատմության մեջ:

* * *

Օգոստոսի 26-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, մեկամսյա հանգրստից հետո, Կիսլովոդսկից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանի:

Հայոց Հայրապետին Երևանի օդանավակայանում դիմավորում են Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը՝ լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

* * *

Օգոստոսի 27-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վերափոխման. Տօն գիտի գոտւոյ սրբոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քարոզում «Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի լոեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունս թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: